ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

4 հունիսի հինգշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

70
(3279)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԿԸՀ–ՈՒՄ ՓԱՇԻՆՅԱՆԻ ՍՏՎԵՐԸ

ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Վահագն Հովակիմյանը, որը տարիներ շարունակ եղել է Նիկոլ Փաշինյանի քաղաքական թիմի անդամը, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ներկայացուցիչ, ԱԺ պատգամավոր եւ հետագայում ընտրվել է ԿԸՀ նախագահ՝ ինքն իրեն կողմ քվեարկելով, չի պատասխանել «Ժողովուրդ» օրաթերթի կողմից բարձրացված առանցքային հարցերին, որոնք վերաբերում էին հենց Նիկոլ Փաշինյանի նախընտրական գործունեությանը:

«Ժողովուրդ» օրաթերթը հետաքրքրվել էր՝ արդյոք իրավաչափ էր այն իրավիճակը, երբ ընտրարշավի ընթացքում պատգամավորի թեկնածու Փաշինյանը հայտարարում էր, որ ԱԱԾ-ից տեղեկություններ է ստացել ընդդիմադիր թեկնածուի վերաբերյալ, իրեն զեկուցել են, որ հաղորդում կներկայացվի եւ այլն, այն դեպքում, երբ հրապարակայնորեն նշում էր, որ գտնվում է արձակուրդում եւ մասնակցում է քարոզարշավին որպես թեկնածու՝ չունենալով առավելություններ մյուս թեկնածուների նկատմամբ: Փոխարենը ԿԸՀ-ն շրջանցել է հարցի բուն էությունը՝ ներկայացնելով միայն Անդրանիկ Թեւանյանի վերաբերյալ դատախազության միջնորդության եւ հանձնաժողովի ընդունած որոշումների մասին տեղեկություններ: Ուշագրավ է, որ ԿԸՀ-ն որեւէ իրավական գնահատական չի տվել հենց այն հանգամանքին, որի վերաբերյալ հարց էր բարձրացվել՝ կարող էր արդյոք թեկնածու Փաշինյանը նախընտրական պայքարի ընթացքում օգտագործել պաշտոնական կարգավիճակից բխող տեղեկություններ, եւ արդյոք դա կարող էր դիտարկվել որպես վարչական ռեսուրսի կիրառում:

Արդյունքում ստեղծվում է տպավորություն, որ հանձնաժողովը պատասխանել է ոչ թե տրված հարցերին, այլ այն հարցերին, որոնց պատասխանելը քաղաքականորեն ավելի հարմար է եղել: Նիկոլ Փաշինյանին վերաբերող մասը երկու անգամ արված մեր հարցումներում ուղղակի շրջանցել է Վահագն Հովակիմյանը: Իհարկե, հասկանալի է, նախկին ղեկավարի դեմ, երբ նա զբաղեցնում է վարչապետի աթոռը, Հովակիմյանը չէր համարձակվի քայլեր իրականացնել: Ուստի «Ժողովրդավար Հայաստանում» օրինաչափ է Վահագն Հովակիմյանի պահվածքը:

Ազգային Ժողովի աշխատակազմի ղեկավար Դավիթ Առաքելյանն այս օրերին արձակուրդում է եւ ակտիվորեն մասնակցում է իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական քարոզարշավին: Նրա բացակայության պայմաններում Ազգային Ժողովի աշխատակազմի ընթացիկ աշխատանքների համակարգումը փաստացի իրականացվում է աշխատակազմի ղեկավարի տեղակալ Էդուարդ Խանզրադյանի կողմից: «Ժողովուրդ» օրաթերթը ուսումնասիրել է Խանզրադյանի վերջին հինգ տարիների հայտարարագրերը՝ հասկանալու համար, թե ինչ գույք, եկամուտներ, դրամական միջոցներ եւ պարտավորություններ է հայտարարագրել ԱԺ բարձրաստիճան պաշտոնյան: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի հրապարակած 2025 թվականի հայտարարագրի համաձայն՝ Էդուարդ Խանզրադյանը հաշվետու տարվա ընթացքում ստացել է ընդհանուր 14 մլն 357 հազար 875 դրամ եկամուտ: Այդ գումարից 12 մլն 136 հազար 258 դրամը կազմել է Ազգային Ժողովի աշխատակազմից ստացած աշխատավարձը, իսկ 2 մլն 221 հազար 617 դրամը՝ եկամտային հարկի վերադարձը: Խանզրադյանը հայտարարագրել է Երեւանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում գտնվող համատեղ սեփականությամբ բնակարան, որը ձեռք է բերվել դեռեւս 1994 թվականին: Նա շարունակում է տնօրինել նաեւ 2003 թվականի արտադրության Mercedes-Benz մակնիշի ավտոմեքենա, որը ստացել է նվիրատվության կարգով 2018 թվականին:



Մանրամասները՝ ArmLur.am կայքում

Վերջին շաբաթներին հանրության ուշադրությունը գրավել են վարչապետ Նիկոլ Փաշինյանի նախընտրական շրջայցերի ընթացքում արված բազմաթիվ կադրերը, որտեղ նա տարբեր համայնքներում մեծ ախորժակով օգտվում է տեղացիների կողմից պատրաստված հյուրասիրություններից: Տպավորություն է ստեղծվում, թե վարչապետը պարզապես մոտենում է պատահական սեղանին եւ ճաշակում այն, ինչ այդ պահին առաջարկում են քաղաքացիները: Սակայն իրականությունն այլ է: «Ժողովուրդ» օրաթերթին իշխանական շրջանակներից տեղեկություններ հայտնի դարձան այն մասին, որ վարչապետի համար նախատեսված յուրաքանչյուր սեղան անցնում է մի ամբողջ «գաստրոնոմիական անվտանգության օպերացիա»: Նախքան վարչապետի մոտենալը, սեղանը մանրակրկիտ ուսումնասիրվում է, ուտեստները զննվում են, գնահատվում է ոչ միայն անվտանգությունը, այլեւ դրանց տեղաբաշխումը, լուսանկարչական տեսանելիությունը եւ նույնիսկ այն, թե որ կողմից է առավել շահավետ կադրը: Աղբյուրների հավաստմամբ՝ միայն բոլոր փուլերն անցնելուց հետո է տրվում պայմանական «բարի ախորժակ» թույլտվությունը, եւ վարչապետը կարողանում է մոտենալ ժողովրդական սեղանին: Այսպիսով, հենց Փաշինյանի ներկայացմամբ «պերաշկի ուտող վարչապետի» կերպարը վաղուց արդեն վերածվել է յուրատեսակ քաղաքական բրենդի, որտեղ նույնիսկ ամենահասարակ պատառը նախապես անցնում է անվտանգության եւ հանրային կապերի ֆիլտրերով: Այսինքն՝ բեմադրվում է նաեւ ճաշացանկը:



«Ժողովուրդ» օրաթերթը ուսումնասիրել է, թե ինչ ունեցվածքով է հեռանում Ազգային Ժողովից նախագահի տեղակալ Հակոբ Արշակյանը, ով ՔՊ նախընտրական ցուցակից դուրս մնաց եւ քարոզարշավներին չի էլ մասնակցում: Մինչ քաղաքական շրջանակներում քննարկվում է նրա հնարավոր «քաղաքական դադարը», «Ժողովուրդ» օրաթերթը փորձել է ամբողջական կերպով վերականգնել պաշտոնյայի գույքային ու եկամտային պատկերը՝ սկսած 2018 թվականից մինչեւ 2025 թվականի վերջին հայտարարագրերը: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ «Մեկ տողանոց կենսագրությամբ ՔՊ-ական շատ պաշտոնյաներ են եկել իշխանության, որոնք գրեթե 8 տարում հասցրել են 3-4 պաշտոն փոխել՝ հարստացնելով կենսագրությունը: Այդպիսի պաշտոնյաներից է նաեւ Հակոբ Արշակյանը: Իսկ ով էր ԱԺ փոխնախագահ Հակոբ Արշակյանը մինչ հեղափոխությունը: 2010-2014 թվականներին նա աշխատել է որպես «Նեյշնլ Ինսթրումենթս» ընկերության համակարգերի ճարտարագետ, իսկ 2014-2017 թվականներին՝ «Ալյանս» գործընկերների ծրագրի տարածաշրջանային ղեկավար. հեղափոխությունից առաջ այսպիսին է եղել Արշակյանի կենսագրությունը: Իսկ հեղափոխությունից հետո նա զբաղեցրել է գրեթե 5 պաշտոն:



Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ՑԱՆԿԱՑԱԾ ՍՑԵՆԱՐ ՀՆԱՐԱՎՈՐ ԵՄ ՀԱՄԱՐՈՒՄ»

ArmLur.am-ը զրուցել է ԱԺ նախկին պատգամավոր Աննա Կոստանյանի հետ:

- Շուտով՝ հունիսի 7-ին, ընտրություններ են: Ի՞նչ ակնկալիքներ ունեք:

- Ավելի ճիշտ կլինի ասել՝ սպասումներ ունեմ, ոչ թե ակնկալիքներ: Սպասում եմ, որ հավաքական ընդդիմությունը եւ հատկապես առաջատար երեք ուժերը բավարար քանակի ձայներ կհավաքեն, որպեսզի Նիկոլ Փաշինյանը չկարողանա կրկին ձեւավորել մեծամասնություն: Ամենամեծ սպասումներս, սակայն, մեր քաղաքացիներից են: Որքան բարձր լինի մասնակցությունը, այնքան քիչ կլինեն գործող իշխանության հաղթելու հնարավորությունները: Այդ պատճառով քաղաքացիներին կոչ եմ անում հունիսի 7-ին դրսեւորել իրենց քաղաքացիական պատասխանատվությունը եւ մասնակցել ընտրություններին:

- Չե՞ք կարծում, որ ընդդիմադիր ուժերը պետք է միավորվեն մեկ ընդհանուր նպատակի շուրջ:

- Այստեղ «պետք է» բառը նույնիսկ բավարար չէ. դա պարտադիր է: Իրական ընդդիմադիր որեւէ ուժ չի կարող արդարացում գտնել միասնական չլինելու համար: Բոլոր տարաձայնությունները պետք է մի կողմ դրվեն, նստեն մեկ սեղանի շուրջ եւ թեկուզ կարճաժամկետ պայմանավորվածություններ ձեռք բերեն՝ հասկանալով, որ այս պահին առաջնային խնդիրը Նիկոլ Փաշինյանի իշխանությանը վերջ տալն է:

- Եթե ընդդիմությունը գա իշխանության, գործող իշխանությունները կհամաձայնե՞ն խաղաղ իշխանափոխության, թե՞ քաղաքական բախումներ կլինեն:

- Ցանկացած սցենար հնարավոր եմ համարում: Եթե գործող իշխանությունը հասկանա, որ պարտվում է, կարող է դիմել տարբեր քայլերի: Նրանք շատ լավ գիտակցում են, թե վերջին ութ տարիներին ինչ քաղաքականություն են վարել եւ ինչ հետեւանքներ են առաջացրել: Հետեւաբար չեմ բացառում, որ փորձեն լարվածություն ստեղծել կամ դիմել այնպիսի գործողությունների, որոնք նախկինում քննադատում էին:

- Վերջին շրջանում հաճախ են խոսում ընդդիմադիր գործիչների նկատմամբ ճնշումների մասին: Ինչո՞վ եք դա պայմանավորում:

- Դա քաղաքական բնույթ ունի: Խոսքը մարդկանց մասին է, որոնք մեծ լսարան ունեն եւ բարձրաձայնում են այն թեմաները, որոնց մասին իշխանությունը նախընտրում է լռել: Նպատակն է վախի մթնոլորտ ստեղծել, սահմանափակել խոսքը եւ մյուսներին էլ զգուշացնել, թե իրենց հետ նույնպես նույնը կարող է պատահել: Սակայն կարծում եմ, որ նման դեպքերը հակառակ ազդեցությունն են ունենում՝ մարդկանց ավելի են համախմբում եւ ընդդիմադիր տրամադրություններն ուժեղացնում:

- Շատերն ասում են, որ ընդդիմության որոշ ներկայացուցիչներ Ռուսաստանի ազդեցության տակ են: Համաձա՞յն եք այդ կարծիքին:

- Եթե խոսում ենք «դրածոների» մասին, ապա առաջին հերթին պետք է խոսել Նիկոլ Փաշինյանի մասին: Նրա քաղաքական քայլերից եւ արտաքին աջակցության աղբյուրներից պարզ երեւում է, որ տարբեր արտաքին կենտրոններ աջակցում են նրան: Միեւնույն ժամանակ, որեւէ քաղաքական ուժի կամ գործչի որոշակի արտաքին քաղաքական կողմնորոշում ունենալը դեռ չի նշանակում, որ նա տվյալ երկրի «դրածոն» է:

- Գործող իշխանության եվրոպական ուղղվածությունը իրական գործընթաց համարո՞ւմ եք:

- Ոչ: Իմ կարծիքով, վերջին տարիներին կատարված քայլերը ոչ թե մոտեցրել, այլ ավելի են հեռացրել Հայաստանը Եվրոպայից: Շատ ծրագրեր եւ համաձայնագրեր մնացել են թղթի վրա: Գեղեցիկ հայտարարությունները կամ խորհրդանշական միջոցառումները դեռ չեն նշանակում իրական եվրոպական ինտեգրում:

- 2020 թվականի պատերազմից հետո շատերը քննադատում են Ռուսաստանին Հայաստանի նկատմամբ բավարար աջակցություն չցուցաբերելու համար: Ինչպե՞ս եք գնահատում այդ հարցը:

- Ես չեմ ցանկանում որեւէ երկրի պաշտպան լինել, սակայն պետք է հիշեցնել, որ պատերազմի ընթացքում պաշտոնական մակարդակով չեն իրականացվել բոլոր այն քայլերը, որոնք անհրաժեշտ էին դաշնակիցների աջակցությունը ստանալու համար: Հետեւաբար նախ պետք է գնահատել սեփական իշխանությունների գործողություններն ու պատասխանատվությունը:

- Ի՞նչ ուղերձ ունեք ընտրողներին հունիսի 7-ի ընտրություններից առաջ:

- Հունիսի 7-ը, իմ գնահատմամբ, Հայաստանի համար կարեւոր եւ ճակատագրական օր է: Քաղաքացիները պետք է հասկանան, որ իրենք ոչ միայն իրավունքներ ունեն, այլ նաեւ պարտականություններ պետության հանդեպ: Ընտրություններին մասնակցելը որոշումների կայացման կարեւորագույն գործիքն է: Յուրաքանչյուր քաղաքացի պետք է գնա ընտրատեղամաս եւ իր խղճի ու համոզմունքների համաձայն կատարի գիտակցված ընտրություն:

Զրուցեց՝ ԻՐԻՆԱ ԱՏԱՆՅԱՆԸ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՆԱԽԱՏԵՍՈՒՄ Է

Եվրահանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լայենը, ինչպես սպասվում է, հինգշաբթի օրը հեռախոսազրույց կունենա ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ: Այս մասին հայտնում է եվրոպական Politico պարբերականը՝ հղում անելով անանուն եվրոպացի պաշտոնյաների: Պարբերականի փոխանցմամբ՝ «Եվրահանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լայենը, հավանաբար, արդեն վաղը կզրուցի վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ»:

Հիշեցնենք, որ 2025 թվականի գարնանը Հայաստանում ընդունվել էր օրենք, որով ամրագրվում էր երկրի՝ Եվրամիությանն անդամակցելու մտադրությունը: Միաժամանակ, Եվրամիությունը Հայաստանին դեռեւս անդամակցության պաշտոնական առաջարկ չի ներկայացրել: Վարչապետ Նիկոլ Փաշինյանը նախկինում հայտարարել էր, որ Երեւանը գիտակցում է՝ Եվրամիության եւ Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) անդամակցությունները համատեղելի չեն, սակայն Հայաստանը հնարավորության սահմաններում կշարունակի համագործակցել երկու ուղղություններով: Ավելի վաղ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը նշել էր, որ Հայաստանը պետք է հնարավորինս շուտ որոշում կայացնի՝ շարունակելու է իր մասնակցությունը ԵԱՏՄ-ին, թե ընտրելու է ԵՄ-ին անդամակցելու ուղին: Նրա խոսքով՝ այդ դեպքում հնարավոր կլինի ապահովել «փափուկ եւ քաղաքակիրթ բաժանում»: Հայաստանի եվրոպական հեռանկարի հարցը քննարկվել էր նաեւ Եվրասիական տնտեսական միությունի վերջին գագաթնաժողովում: Մայիսի 29-ին Ռուսաստանի, Բելառուսի, Ղազախստանի եւ Ղրղզստանի ղեկավարները համատեղ հայտարարությամբ ընդգծել էին, որ կիսում են այն դիրքորոշումը, ըստ որի՝ Հայաստանում անհրաժեշտ է անցկացնել համազգային հանրաքվե՝ ԵՄ-ին անդամակցելու կամ ԵԱՏՄ կազմում մնալու հարցով:

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԱՎԱՐՏՎՈՒՄ ԵՆ

Թուրքիայից հայտարարել են, թե «-Զանգեզուրի միջանցքի» ադրբեջանական հատվածում աշխատանքները ավարտվում են: Այս մասին հայտարարել է Թուրքիայի տրանսպորտի եւ ենթակառուցվածքների նախարար Աբդուլքադիր Ուրալօղլուն: «Զանգեզուրի միջանցքի նախագծի իրականացումը շարունակվում է, եւ Թուրքիան արդեն սկսել է շինարարական աշխատանքները երթուղու իրեն բաժին ընկած հատվածում: Թուրքիայի տարածքում անցկացվել է 224 կիլոմետր երկարությամբ Կարս-Իդղըր-Արալիք-Դիլուջու երկաթգծի կառուցման մրցույթը, եւ աշխատանքները արդեն սկսվել են: Բացի այդ, Նախիջեւանի մոտ 180 կիլոմետր երկարությամբ հատվածում նախատեսվում է շինարարության շարունակությունը ընթացիկ տարվա ընթացքում: Նախագծի կարեւոր եւ դեռեւս ավարտված չլինող հղումը շարունակում է մնալ 41-43 կիլոմետր երկարությամբ Զանգեզուրի միջանցքի հատվածը, որը անցնում է Հայաստանի տարածքով: Ադրբեջանական կողմում աշխատանքները նույնպես մոտենում են ավարտին, որոշ հատվածներ արդեն պատրաստ են: Մնում է 41-43 կիլոմետր երկարությամբ Զանգեզուրի անցումը, որը գտնվում է Հայաստանի տարածքում: Ինչպես հայտնի է, այն որոշ դեպքերում կոչվում է Թրամփի երթուղի: Մենք սպասում ենք այնտեղ գործընթացի մեկնարկին ԱՄՆ-ի եւ Ադրբեջանի համաձայնության դեպքում: Նախագծի ավարտից հետո շահագործման կհանձնվի մոտ 860 կիլոմետր երկարությամբ տրանսպորտային երթուղի, ինչը կավելացնի Թուրքիայի, թուրքական աշխարհի եւ Կենտրոնական Ասիայի երկրների միջեւ հաղորդակցության կարճ եւ արդյունավետ հնարավորությունները»:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԿԱՐՈՂ Է ԿՈՐՑՆԵԼ



ՌԴ Պետդումայի նախագահ Վյաչեսլավ Վոլոդինը հայտարարել է, որ Եվրամիությանն անդամակցելու դեպքում Հայաստանը կարող է կորցնել իր ազգային ինքնությունը՝ ինչպես, իր խոսքով, արդեն կորցրել է «կոնյակ» անվանումն օգտագործելու իրավունքը:

«Վեստի» հեռուստաալիքին տված հարցազրույցում Վոլոդինը նշել է, որ Եվրամիությունը Հայաստանին խոստանում է տնտեսական աճ, ինչպես ժամանակին խոստացել էր Ուկրաինային: Սակայն, նրա պնդմամբ, ուկրաինական արտադրանքը եվրոպական շուկաներում այդպես էլ լայն մուտք չի ստացել՝ մրցունակ չլինելու պատճառով:

«Իսկ ի՞նչ է վաճառելու Հայաստանը: Գինին վաճառում են մեզ: Եկավ էմանուել Մակրոնը, գրկախառնվում էին Նիկոլ Փաշինյանի հետ, թող պայմանագիր կնքեն ու գինի մատակարարեն Ֆրանսիա: Բայց չէ: Նույնիսկ կոնյակն արդեն կոնյակ չէ, այլ բրենդի, որովհետեւ ֆրանսիացիներն ասացին՝ դա բրենդի է: Նրանք կկորցնեն իրենց ինքնությունը այնպես, ինչպես այն կորցրին Ուկրաինայում»,- հայտարարել է Վոլոդինը:

ՌԴ Պետդումայի նախագահը միաժամանակ ընդգծել է, որ պետք է տարբերակել Հայաստանի ժողովրդին եւ երկրի ներկայիս իշխանություններին: Նրա խոսքով՝ հենց իշխանություններն են, որոնք «երկիրը տանում են դեպի անդունդ»: Վոլոդինը հավելել է, որ Ռուսաստանը շարունակում է աջակցել Հայաստանին եւ հայ ժողովրդին, սակայն դեմ է հարաբերություններում «ստին, երկակի ստանդարտներին եւ ոչ անկեղծությանը»:

«Մենք միայն ազնիվ, բաց հարաբերությունների եւ փոխշահավետ համագործակցության կողմնակից ենք: Բարեկամությունը երկկողմանի երթեւեկությամբ փողոց է»,- եզրափակել է նա:

ՑԱՆԿԱՆՈՒՄ Է ՀԱՆԴԻՊԵԼ

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը հայտարարել է, որ կցանկանար հանդիպել Իրանի գերագույն առաջնորդ այաթոլլահ Մոջթաբա Խամենեիի հետ:«Ես կցանկանայի հանդիպել նրա հետ: Մենք, հավանաբար, մի օր կհանդիպենք», - ասել է Թրամփը «Նյու Յորք Փոստ»-ին տված հարցազրույցում: Ինչպես նշել է ամերիկացի առաջնորդը, նա այնպիսի տպավորություն է ստացել, որ Միացյալ Նահանգները «լավ լեզու է գտնում» Իրանի նոր առաջնորդի հետ:

ԸՆԴՈՒՆԵԼ Է ԴԵՍՊԱՆԻՆ

Փոխվարչապետ Մհեր Գրիգորյանն ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Խալիլ Շիրողլամիին: Հանդիպման ընթացքում զրուցակիցները քննարկել են եւ երկուստեք կարեւորել էներգետիկ, լոգիստիկ եւ առեւտրատնտեսական ոլորտներում համագործակցության զարգացումը: Անդրադարձ է կատարվել նաեւ Հայաստան-Իրան երկկողմ համագործակցության օրակարգի այլ հարցերի:

ԶԱԽԱՐՈՎԱՆ ՀԱՄԵՄԱՏԵԼ Է

ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան անդրադարձել է Հայաստանի՝ Եվրամիության եւ Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) միջեւ ընտրության հարցին՝ երկիրը համեմատելով օդանավակայանում իր վերջնական ուղղությունը դեռեւս չորոշած ուղեւորի հետ: «Պատկերացրեք՝ օդանավակայան է, սպասասրահ, մի քանի ուղեւորներ անցել են բոլոր ստուգումները եւ պատրաստվում են նստել ինքնաթիռ: Հանկարծ նրանցից մեկը, որը պետք է թռչեր B կետ, հայտարարում է, որ, հավանաբար, ցանկանում է մեկնել G կետ: Մյուսները հարցնում են՝ ի վերջո ո՞ւր եք թռչում՝ B, թե՞ G: Իսկ նա պատասխանում է, որ դեռ չգիտի, գուցե շարունակի թռչել նաեւ B ուղղությամբ»,- ասել է Զախարովան:

Ռուս դիվանագետի խոսքով՝ յուրաքանչյուր պետություն կամ անձ իրավունք ունի սեփական ընտրությունն անելու, սակայն այդ իրավունքը չպետք է վերածվի մանիպուլյացիայի:

«Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ընտրության՝ օրենքի շրջանակում: Սակայն անընդունելի է, երբ բարի մտադրություններն ու օրինականությունը օգտագործվում են ոչ ազնիվ նպատակներով: Եթե ցանկանում ես հասնել G կետ B կետի միջոցով, դա նույնպես հնարավոր է, դա կոչվում է տարանցում: Բայց դրա համար գոյություն ունեն հստակ կանոններ եւ տրամաբանություն»,- նշել է նա: Զախարովան ընդգծել է, որ խնդիրը ոչ թե «երկու աթոռի վրա նստելու» փորձն է, այլ այն, երբ հայտարարված նպատակներն ու իրական մտադրությունները չեն համընկնում: «Սա նույնիսկ երկու աթոռի վրա նստելու փորձ չէ: Դա ավելի վատ է, քանի որ նման վարքագիծը կարող է վնասել նաեւ մյուսներին»,- եզրափակել է ՌԴ ԱԳՆ ներկայացուցիչը:

Վերջին շաբաթներին Մոսկվան բազմիցս հայտարարել է, որ Հայաստանը պետք է հստակեցնի իր հետագա արտաքին տնտեսական եւ քաղաքական ուղղությունը՝ Եվրամիությանն անդամակցելու ձգտումների եւ Եվրասիական տնտեսական միությունում անդամակցության համատեքստում:

ՈՐՆ Է ՆՊԱՏԱԿԸ

ԻՆՉՈ՞Ւ ԵՆ ՉԵՋՈՔԱՑՎՈՒՄ ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ԼԻԴԵՐՆԵՐԸ

Հայաստանում 2026 թվականի խորհրդարանական ընտրություններին նախորդող շրջանը ուղեկցվում է իրավապահ մարմինների ակտիվ գործողություններով, որոնց կենտրոնում հայտնվել են ընդդիմադիր քաղաքական ուժերը:



Վերջին ամիսներին Հակակոռուպցիոն կոմիտեն եւ այլ իրավապահ կառույցներ հրապարակել են մի շարք ձայնագրություններ եւ հաղորդագրություններ, որոնցում, ըստ քննության վարկածի, քննարկվում են ընտրական գործընթացների վրա ազդեցության, ընտրողների հետ աշխատանքի եւ հնարավոր ընտրակաշառքի հետ կապված հարցեր: Իրավապահների հրապարակած նյութերը հիմնականում վերաբերում են «Ուժեղ Հայաստան» դաշինքի, «Հայաստան» դաշինքի եւ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության անդամներին: Քննության մարմինները պնդում են, որ իրականացվում են ընտրակաշառքի եւ ընտրական իրավախախտումների վերաբերյալ լայնածավալ ստուգումներ, իսկ հրապարակված ձայնագրությունները ներկայացվում են որպես այդ գործերի ապացուցողական բազայի մաս: Միեւնույն ժամանակ, ընդդիմադիր ուժերը պնդում են, որ հրապարակումները միակողմանի են, ունեն քաղաքական նպատակահարմարություն եւ ուղղված են նախընտրական գործընթացների վրա ազդելուն:

Ուշագրավ է, որ իրավապահ գործողությունների հիմնական թիրախում հայտնվել են ոչ թե շարքային ակտիվիստները, այլ քաղաքական ուժերի կազմակերպչական հենասյուն համարվող անձինք՝ նախընտրական շտաբների ղեկավարներ, տարածքային պատասխանատուներ, քարոզարշավների համակարգողներ եւ քաղաքական առաջնորդներ: Հենց այդ շրջանակներից են վերջին շրջանում առավել հաճախ արձանագրված ձերբակալություններն ու կալանավորումները:

Հանրային լայն արձագանք ստացավ նաեւ քաղաքական գործիչ, «Բարգավաճ Հայաստան» կուսակցության պատգամավորության թեկնածու, 2-րդ համար Անդրանիկ Թեւանյանի կալանավորումը, որը տեղի ունեցավ ընտրական գործընթացների ամենաթեժ փուլում: Ուշագրավ էր նաեւ «Ուժեղ Հայաստան» կուսակցության անդամ Արթուր Ավանեսյանի (Կանդազ) կալանավորումը: Նա կալանավորվեցնրա համար, որ հեռախոսազանգով արցախցիներին ասել է՝ «մենք ընտրվենք՝ գործն էլ է լինելու, հողն էլ»:

Երեկ նաեւ ձերբակալեցին նույն կուսակցության անդամ Ալիկ Ալեքսանյանին, որը կրկին ակտիվ ներգրավված է կազմակերպչական աշխատանքներում:

Քաղաքական դիտորդների մի մասը նշում է, որ նախընտրական շրջանում գաղտնալսումների, ձայնագրությունների հրապարակման եւ կալանավորումների համակցված կիրառումը ձեւավորում է այնպիսի միջավայր, որտեղ հանրային քննարկման կենտրոնում հայտնվում են ոչ թե ծրագրերն ու գաղափարները, այլ քրեական գործերն ու իրավապահ գործողությունները: Ընդդիմադիր ուժերը սա դիտարկում են որպես քաղաքական ճնշման մեխանիզմ, մինչդեռ իշխանության ներկայացուցիչները պնդում են, որ խոսքը բացառապես օրենքի կիրառման եւ ընտրական գործընթացների մաքուր, թափանցիկ ապահովման մասին է:

Հիշեցնենք, որ «Միասնության թեւեր» կուսակցության վարչապետի թեկնածու Արման Թաթոյանի ձեռքի տակ է հայտնվել ուշագրավ մի ձայնագրություն, որտեղ դպրոցի տնօրենը հորդորում է ուսուցիչներին աշակերտների հետ միասին մասնակցել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական քարոզարշավին, սակայն այստեղ անհասկանալին այն է, որ իրավապահ համակարգը նույն ակտիվությամբ եւ աչալրջությամբ չի գործում:

Հետեւաբար, մնում է ենթադրել, որ, անկախ քաղաքական գնահատականներից, նախընտրական պայքարի ընթացքում իրավապահ մարմինների գործողությունների հիմնական թիրախը դարձել են ընդդիմադիր ուժերի կազմակերպչական կառույցները: Երբ կալանավորվում են շտաբների ղեկավարներ, ընտրական գործընթացների համակարգողներ կամ քաղաքական լիդերներ, դա անխուսափելիորեն ազդեցություն է ունենում տվյալ քաղաքական ուժի քարոզչական եւ կազմակերպչական հնարավորությունների վրա: Այդ հանգամանքն էլ դարձել է ներկայիս նախընտրական շրջանի ամենաքննարկվող թեմաներից մեկը:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՑԱՆԿԱՆՈՒՄ Է ՕԳՏԱԳՈՐԾԵ՞Լ

ՌԴ Պետդումայի նախագահ Վյաչեսլավ Վոլոդինը հայտարարել է, որ Հայաստանի ներկայիս իշխանությունները փորձում են պահպանել հարաբերությունները Ռուսաստանի հետ՝ դրանք օգտագործելով որպես գործիք՝ հետագայում Եվրամիությանը միանալու նպատակով: «Ասում են՝ ցանկանում ենք մնալ ԵԱՏՄ-ում, հարաբերություններ կառուցել Ռուսաստանի հետ: Ի՞նչ հարաբերություններ: Սպառողական: Օգտագործե՞լ մեր երկիրը, որպեսզի անցնեն այս փուլը եւ մտնեն Եվրամիություն: Դա ազնիվ չէ»,- ասել է Վոլոդինը «Վեստի» հաղորդմանը տված հարցազրույցում: Նրա խոսքով՝ Ռուսաստանը շարունակում է աջակցել Հայաստանին եւ նրա քաղաքացիներին՝ ապահովելով տնտեսական արտոնություններ: Վոլոդինը նշել է, որ Հայաստանը ռուսական գազը ստանում է շուրջ չորս անգամ ավելի ցածր գնով, իսկ Ռուսաստանը շարունակում է մնալ հայկական արտադրանքի կարեւորագույն շուկաներից մեկը: «Այդ դեպքում հրաժարվեք դրանից եւ բացահայտ ասեք ձեր քաղաքացիներին: Գնացեք Եվրամիություն, եթե ձեզ այդ բարոյականությունն ավելի մոտ է»,- հայտարարել է ՌԴ Պետդումայի նախագահը:

Վերջին օրերին ռուս բարձրաստիճան պաշտոնյաների կողմից հաճախակի են դարձել հայտարարությունները Հայաստանի եվրոպական ինտեգրման գործընթացի վերաբերյալ: Մոսկվան պնդում է, որ Երեւանը պետք է հստակեցնի իր արտաքին քաղաքական եւ տնտեսական առաջնահերթությունները՝ Եվրասիական տնտեսական միությունում անդամակցության եւ Եվրամիությանն անդամակցելու հայտարարված ձգտումների համատեքստում:

ԻՐԱՆԸ ՄՏԱԴԻՐ Է

Մերձավորարեւելյան հակամարտության ֆոնին հարկադիր դադարից հետո Իրանը հայտարարել է Եվրասիական տնտեսական միության հետ ազատ առեւտրի գոտու համաձայնագրի իրագործման աշխատանքները լիովին վերսկսելու մտադրության մասին: «Արմենպրես»-ի փոխանցմամբ՝ այդ մասին «Ինտերֆաքս»-ի հետ հարցազրույցում հայտարարել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (ԵԱՏՀ) առեւտրի նախարար Անդրեյ Սլեպնյովը:

«Մարտին աշխատանքը դժվարացել էր. հակամարտության առաջին շաբաթվա ընթացքում մենք նույնիսկ լուրջ խնդիրներ ունեինք կապի հարցում, չհաշված պլանային նիստերի անցկացումը եւ այլն: Սակայն այսօր իրավիճակը փոխվել է, եւ կարող եմ ասել՝ ամենակարեւոր ուղերձը, որը մենք Աստանայում կայացած հանդիպման ժամանակ լսել ենք (խմբ.՝ Իրանի արդյունաբերության, հանքերի եւ առեւտրի) նախարար (Սեյեդ Մոհամմադ) Աթաբակից, բոլոր ուղղություններով լիաֆորմատ պլանային աշխատանքի վերսկսման կոչն էր: Այժմ լրիվ ծավալով վերսկսում ենք բոլոր աշխատանքային շփումները՝ նպատակ ունենալով լիարժեքորեն համալրել համատեղ կոմիտեի երկրորդ նիստի օրակարգը, որն, ինչպես ակնկալում ենք, աշնանը կկայանա Թեհրանում», - ասել է Սլեպնյովը:

Գործակալությունը հիշեցնում է, որ ԵԱՏՄ երկրների եւ Իրանի միջեւ ազատ առեւտրի համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2025 թ. մայիսին: «Մենք տեսնում ենք, որ 2025 թվականը տվել է առեւտրի հերթական աճը՝ 15,5%-ով: Մեր մատակարարումներն Իրան աճել են ավելի քան 20%-ով: Նշեմ, որ այս աճն արդեն բավականին բարձր հիմքից է. մենք արագ տեմպերով աճում ենք արդեն մի քանի տարի, եւ, իհարկե, տարեցտարի ավելի դժվար կլինի այս տեմպերը պահպանելը», - Սլեպնյովը մեկնաբանել է համաձայնագրի իրագործման առաջին տարվա արդյունքները:

78 ԴԵՊՔ

ԿԱՆ ՉԵՐԲԱԿԱԼՎԱԾՆԵՐ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾՆԵՐ

Քաղաքացիների սահմանադրական իրավունքները դատական պաշտպանելու համար ՆԳՆ ոստիկանությունը Ազգային Ժողովի հերթական համապետական ընտրությունների նախընտրական փուլում հնարավոր ընտրական բնույթի հանցագործությունների կանխարգելման եւ բացահայտման նպատակով հետեւողականորեն իրականացնում է թիրախային օպերատիվ-հետախուզական եւ անհրաժեշտ այլ միջոցառումներ:

ՆԳՆ ոստիկանության իրականացրած միջոցառումների արդյունքում ստացված տեղեկությունների համակողմանի վերլուծության հիման վրա ներկայացվել է հանցագործության մասին 78 հաղորդում, որոնց հիման վրա նախաձեռնվել են քրեական վարույթներ: Մասնավորապես, Քրեական ոստիկանության կողմից արդեն իսկ ներկայացվել է հանցագործության մասին 37 հաղորդում, որից 8-ը հավաքին մասնակցելու նպատակով նյութապես շահագրգռելու, իսկ 11-ը՝ համացանցում իրականացված մշտադիտարկման արդյունքում հայտնաբերված դեպքերի վերաբերյալ:

«Դրանցից 13-ը եղել են ընտրակաշառք տալու, ստանալու եւ ընտրակաշառքի միջնորդության վերաբերյալ դեպքեր, 3-ը՝ ընտրության ժամանակ բարեգործության արգելքը խախտելու վերաբերյալ, 2-ը անձի ընտրական իրավունքի ազատ իրականացմանը խոչընդոտելու վերաբերյալ դեպքեր»,- նշել է ՆԳՆ ոստիկանության ՔՈԳՎ պետ Արթուր Բարսեղյանը: Նշված հանցավոր դրսեւորումների փաստական հանգամանքները պարզելու եւ հնարավոր հանցանշանները հայտնաբերելու նպատակով Քրեական ոստիկանությունը գործընկեր իրավապահ մարմինների հետ համագործակցությամբ մի շարք հասցեներում իրականացրել է խուզարկություններ: Ձերբակալվել եւ նախաքննական մարմին է ներկայացվել 24 անձ:

«9-ը կալանավորվել են, 7-ի նկատմամբ կիրառվել է տնային կալանք, 3-ի նկատմամբ՝ վարչական հսկողություն, 4-ի նկատմամբ՝ բացակայելու արգելք խափանման միջոցները, 1-ը հանձնվել է դաստիարակչական հսկողության եւ 2 անձի նկատմամբ հայտարարվել է հետախուզում»,- նշել է ՆԳՆ ոստիկանության ՔՈԳՎ պետ Արթուր Բարսեղյանը:

ՀՈԳՎ ենթակա ստորաբաժանումների կողմից արձանագրվել է ընտրական բնույթի հանցագործության 41 դեպք: ՀՈԳՎ պետի պարտականությունները կատարող Կարեն Խաչատրյանի խոսքով՝ արձանագրված դեպքերից 36-ը վերաբերում է նախընտրական քարոզչության իրականացմանը խոչընդոտելուն, 2-ը՝ ընտրակաշառք տալուն կամ ստանալուն, իսկ 3-ը՝ նյութական շահագրգռման միջոցով հավաքներին մասնակցելուն հարկադրելը: Համայնքային ոստիկանների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ձերբակալվել եւ նախաքննական մարմին է ներկայացվել 20 անձ:

«Նրանցից 8-ի խափանման միջոց է կիրառվել կալանավորումը, 7-ի նկատմամբ՝ տնային կալանքը, 4-ի նկատմամբ՝ բացակայելու արգելքը: Մյուս քրեական վարույթներով խափանման միջոցներ դեռեւս չեն կիրառվել»,- ներկայացրել է ՆԳՆ ոստիկանության ՀՈԳՎ պետի պարտականությունները կատարող Կարեն Խաչատրյանը:

ՆԳՆ ոստիկանությունը շարունակում է իրականացնել օրենսդրությամբ իրեն վերապահված գործառույթները եւ կիրառելու է ողջ գործիքակազմը՝նախընտրական շրջանում, ինչպես նաեւ ընտրությունների ժամանակ գործընթացի բնականոն ընթացքն ապահովելու, հնարավոր հանցավոր դրսեւորումները կանխելու եւ բացահայտելու նպատակով:

ԼՈՒՐԵՐ

956,400 ԵՎՐՈ

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեն, հարկային իրավախախտումների եւ տնտեսական հանցագործությունների դեմ պայքարի շրջանակում, լայնածավալ միջոցառումներ է իրականացնում ՀՀ պետական սահմանով կանխիկ դրամական միջոցների անօրինական տեղափոխման դեպքերի հայտնաբերման ուղղությամբ: Օրերս ՊԵԿ Էլեկտրոնային առեւտրի եւ օդային տրանսպորտով իրականացվող փոխադրումների վարչության ուղեւորների մաքսային սպասարկման եւ հսկողության «Զվարթնոց եւ Էրեբունի» բաժնի աշխատակիցները մաքսային հսկողության ընթացքում հայտնաբերել են խոշոր չափի չհայտարարագրված կանխիկ արտարժույթ՝ ընդհանուր 956 400 եվրո կանխիկ դրամական միջոց:

Այսպես, Դորտմունդ-Երեւան չվերթի ուղեբեռների նախնական ռենտգեն տեսազննության ժամանակ մաքսային ծառայողները կասկածներ են ունեցել որոշ ուղեբեռների վերաբերյալ: Ուղեւորներից երկուսին, որոնք ինքնուրույն ընտրել էին երկուղի համակարգի «Կանաչ ուղի» ընթացակարգը, «Կանաչ ուղի» ելքի գիծը հատելուց հետո, մաքսային ծառայողներն ուղեկցել են մաքսային հսկողության «-Կարմիր ուղի» գոտի, որտեղ ենթարկվել են մաքսային տեսազննման: Արդյունքում ՀՀ քաղաքացի Մ.Ն-ին պատկանող ուղեբեռներում հայտնաբերվել են առանց համապատասխան մաքսային հայտարարագրման Հայաստան տեղափոխված ընդհանուր 578 050 եվրո կանխիկ դրամական միջոց:

Նույն գործողությունների շրջանակում զննության է ենթարկվել նաեւ Նիդերլանդների Թագավորության քաղաքացի Ս.Ն.-ի ուղեբեռը: Վերջինիս ուղեբեռում եւս հայտնաբերվել է առանց համապատասխան մաքսային հայտարարագրման, օդային ճանապարհով Հայաստան տեղափոխված 378 350 եվրո կանխիկ դրամական միջոց: Էլեկտրոնային առեւտրի եւ օդային տրանսպորտով իրականացվող փոխադրումների վարչության, ինչպես նաեւ Մաքսանենգության դեմ պայքարի վարչության աշխատակիցները համատեղ կազմել են համապատասխան արձանագրություններ: Այժմ իրականացվում են օրենքով նախատեսված հետագա գործողություններ:

Պետական եկամուտների կոմիտեն հորդորում է սահմանը հատող անձանց նախապես ծանոթանալ գործող մաքսային կանոններին եւ կատարել օրենքով սահմանված պարտավորությունները՝ ապահովելով մաքսային գործընթացների օրինական եւ թափանցիկ իրականացումը:

ԿՎԵՐԱԴԱՐՁՎԻ

Դատախազությունը տեղեկացրել էր, որ 2008 թվականի հոկտեմբերի 8-ից մինչեւ 2015 թվականի ապրիլի 30-ն ընկած ժամանակահատվածում Աբովյան քաղաքի ղեկավարի պաշտոնը զբաղեցրած Կ.Գ.-ն, անտեսելով Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված կարգավորումը (ֆիզիկական եւ իրավաբանական անձանց օտարման ոչ ենթակա հողեր), Աբովյանի համայնքապետարանի իրավասու անձանց օժանդակությամբ, աճուրդներով եւ ուղղակի վաճառքով տարբեր ֆիզիկական եւ իրավաբանական անձանց օտարել է 60-ից ավելի հողատարածք: Ապօրինի օտարված հողատարածքների ցանկում է եղել Աբովյան քաղաքի Ռոսիա փողոցի 1/25 հասցեում գտնվող՝0,17521 հա մակերեսով հողամասը. այն 2016 թվականի հունիսի 6-ին աճուրդ վաճառքի միջոցով օտարվել է ֆիզիկական անձի: Վերջինս 2024 թվականի մարտի 22-ին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի հիման վրա նույն հողամասը 72 միլիոն դրամով օտարել է այլ անձի: Գլխավոր դատախազությունը, պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորության շրջանակում, հայցադիմում էր ներկայացրել Հակակոռուպցիոն դատարան՝ընդդեմ Աբովյան համայնքի՝աճուրդն անվավեր ճանաչելու եւ անվավերության հետեւանքներ կիրառելու պահանջով: Հակակոռուպցիոն դատարանի՝ 2026 թվականի մայիսի 29-ի վճռով՝ բավարարվել է Գլխավոր դատախազության հայցը: Վճռով անվավեր է ճանաչվել Աբովյան համայնքի կողմից կայացված աճուրդը եւ որպես աճուրդի անվավերության հետեւանք՝ անվավեր են ճանաչվել Աբովյան համայնքի եւ ֆիզիկական անձի միջեւ 2016 թվականի հունիսի 6-ին կնքված հողամասի առուվաճառքի մասին պայմանագիրը եւ պայմանագրի հիման վրա կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը: Միաժամանակ անվավեր է ճանաչվել 2024 թվականի մարտի 22-ին կնքված անշարժ գույքի առուվաճառքի վերաբերյալ պայմանագիրը եւ պայմանագրի հիման վրա կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը: Վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո, Աբովյան համայնքին կվերադարձվի Ռոսիա փողոցի 1/25 հասցեում գտնվող՝0,17521 հա մակերեսով հողամասը: Հիշեցնենք, որ Հակակոռուպցիոն քրեական դատարանում քննվող գործով Աբովյանի նախկին քաղաքապետ Կ.Գ.-ն մեղադրվում է հողատարածքներ ապօրինի օտարելու (65 դրվագ), պաշտոնեական կեղծիքի (49 դրվագ), փողերի լվացման (2 դրվագ) եւ պաշտոնեական լիազորությունները չարաշահելու մեջ:

ԼՈՒՐԵՐ

1 ՔՈՀ, 2 ՏՈՒԺԱԾ

Հունիսի 2-ին ողբերգական դեպք է տեղի ունեցել Արարատի մարզում: Ժամը 13:00-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Մասիսի բաժնում, միաժամանակ նաեւ ՀՀ ՆԳՆ ոստիկանության Պարեկային ծառայության Արարատի մարզի գումարտակում օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ Մասիս-Էջմիածին ավտոճանապարհի Էջմիածնի խճուղու թիվ 9 հասցեում շինարարական աշխատանքներ կատարելու ժամանակ բետոնե ծածկի փլուզում է տեղի ունեցել: Ինչպես հայտնում է shamshyan.com-ը, տեղում պարզվել է, որ բետոնե ծածկի փլուզման հետեւանքով կա 1 զոհ, 2 տուժած: Դեպքի փաստով Մասիսի քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ, որտեղ էլ պարզում են կառուցապատողի եւ սեփականատիրոջ, մահացածի եւ տուժածների ինքնությունը:

ԸՆԿԵԼ Է 4–ՐԴ ՀԱՐԿԻՑ

Հունիսի 2-ին ողբերգական դեպք է տեղի ունեցել Երեւանի Նոր Նորք վարչական շրջանում կառուցվող էլիտար բազմաբնակարանային շենքում: Ժամը 15:00-ի սահմաններում 112 կենտրոն ահազանգ է ստացվել, որ Գյուրջյան փողոցի 14/1 հասցեում գտնվող շինհրապարակում դի կա: Դեպքի վայր են ժամանել ոստիկաններն ու քննիչները: Նախնական տվյալներով՝ մահացածը շինհրապարակում աշխատող, Արարատի մարզի 34-ամյա բնակիչ Սարգիս Ս.-ն է, որը ընկել է կառուցվող շենքի 4-րդ հարկից: Դեպքի փաստով նախաձեռնվել է քրեական վարույթ: Ըստ ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանի՝ շինհրապարակում բացակայել է օրենքով նախատեսված տեղեկատվական ցուցանակը, որտեղ պետք է նշված լինեին կառուցապատողի, պատվիրատուի եւ շինարարության ժամկետների վերաբերյալ տվյալները:

ԹՄՐԱՄԻՋՈՑԻ ԻՐԱՑՄԱՆ ԴԵՊՔ

Համայնքային ոստիկանության գլխավոր վարչության օպերատիվ-վերլուծական վարչության ծառայողները տեղեկություն էին ստացել, որ Երեւանի բնակիչ մի երիտասարդ թմրամիջոց է ձեռք բերում եւ իրացնում: Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում 25-ամյա երիտասարդը Հալաբյան փողոցի հարակից զբոսայգում հայտնաբերվել, ձերբակալվել եւ տեղափոխվել է Համայնքային ոստիկանության Մաշտոցի բաժին: Նրա անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է թմրամիջոցի նմանվող զանգվածով 14 փաթեթ՝ ընդհանուր 36,94 գրամ քաշով: Բացատրական աշխատանքի արդյունքում երիտասարդը հայտնել է, որ թմրամիջոցը իրացնելու նպատակով ձեռք է բերել տելեգրամյան հավելվածի միջոցով: Հայտնել է նաեւ, որ հինգ փաթեթ արդեն իսկ տեղադրել է Նոր Նորքի 5-րդ զանգվածում: 25-ամյա երիտասարդը ներկայացվել է նախաքննական մարմին, ապա տեղափոխվել ձերբակալվածների պահման վայր: Կատարվում է նախաքննություն:

● *Ըստ վիճակագրական տվյալների՝ 2026 թվականի հունիսի 1-ից 2-ը կամավոր ներկայացել է 5 հետախուզվող:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԽԱՌՆ ԵՆ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը մայիսի 7-ից վարչապետ Նիկոլ Փաշինյանի, բազմաթիվ նախարարների հետ գտնվում է արձակուրդի մեջ: Այդ արձակուրդը նախընտրական է, քանզի արձակուրդում գտնվող բարձրաստիճան պաշտոնյաները զբաղված են «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության քարոզչությամբ: Նիկոլ Փաշինյանի դասընկեր, նրա ամուսնության քավոր, Փաշինյանի որոշմամբ 2021թ. ապրիլի 8-ին Տավուշի մարզպետ նշանակված Հայկ Ղալումյանը ՔՊ կուսակցության նախընտրական ցուցակի 49-րդ տեղն է զբաղեցնում: Չնայած այն բանին, որ Հայկ Ղալումյանը արձակուրդում է, պետական ռեսուրս հանդիսացող Տավուշի մարզպետարանի ինտերնետային կայքում հրապարակված են Հ. Ղալումյանի շնորհավորական ուղերձները մայիսի 9-ի՝ Հաղթանակի եւ խաղաղության տոնի, մայիսի 16-ին՝Ուսանողների եւ երիտասարդների օրվա, մայիսի 22-ին՝դպրոցական Վերջին զանգի առթիվ: Տավուշի մարզպետին փոխարինում է, նրա պարտականությունները կատարում է մարզպետի տեղակալ Նարեկ Ղուշչյանը: Տավուշի մարզպետարանի ինտերնետային կայքի «Տեղեկատվական կենտրոն» բաժնի «Նորություններ» ենթաբաժնում տեղադրված վերջին լուրը Հայկ Ղալումյանի շնորհավորական ուղերձն է Վերջին զանգի առթիվ: 4 խոշոր համայնքներից բաղկացած Տավուշի մարզում անցած 10 օրում՝ մայիսի 22-ից մինչեւ հունիսը 2-ը, որեւէ կարեւոր իրադարձություն, միջոցառում տեղի չի՞ ունեցել, որ մարզպետարանի ինտերնետային կայքն այդ մասին չի տեղեկացնում: Կարծես թե Հայկ Ղալումյանի հետ Տավուշի մարզպետարանն էլ է նախընտրական արձակուրդ գնացել:

ՋՐՀԵՂԵՂԻՆ ԱՆՊԱՏՐԱՍՏ

2024թ. մայիսի 27-ի ջրհեղեղը ավերածություններ գործեց, դրա հետեւանքով Լոռու եւ Տավուշի մարզերում 2-ական զոհ եղավ: 2 տարի անց այդ ջրհեղեղի հետեւանքների մի մասն է վերացված, մինչդեռ առկա է նոր ջրհեղեղի վտանգ: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում եմ արել. «2025 թվականին Դեբեդ եւ Աղստեւ գետերի հուների մաքրման, ափերի ամրացման ի՞նչ աշխատանքներ են կատարվել, որքա՞ն գումարի, ո՞ւմ ֆինանսավորմամբ: 2026 թվականին այդ գետերի հուների մաքրման, ափերի ամրացման ինչքա՞ն գումարի աշխատանքներ են նախատեսված. ո՞ւմ ֆինանսավորմամբ, դրանք ե՞րբ են իրականացվելու»: Մարզպետի աշխատակազմից հայտնել են. «2025 թվականին պետական բյուջեի հաշվին 44 միլիոն դրամի չափով կատարվել են Աղստեւ գետի հունի մաքրման աշխատանքներ, 2026 թվականին եւս նախատեսվում է կատարել Դեբեդ գետի հունի մաքրման, կարգավորման աշխատանքներ»: Աղստեւի հունի մի հատված է մաքրվել, Դեբեդի հունը չի մաքրվել, ափապաշտպան աշխատանքների մասին էլ խոսք չկա: Տարերային աղետներից, մասնավորապես ջրհեղեղից, դասեր չեն քաղում:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ

ԻՆՉ ՍՊԱՍԵԼ ԱՌԱՋԻԿԱՅՈՒՄ

2026 թվականի մայիսին Ռուսաստանը Հայաստանի նկատմամբ կիրառել է մի շարք տնտեսական եւ առեւտրային սահմանափակումներ, որոնք հիմնականում առնչվում են հայկական արտադրանքի արտահանմանը ռուսական շուկա:

Մասնավորապես, մայիսի 22-ից ՌԴ-ն ժամանակավորապես արգելել է Հայաստանից ծաղիկների ներմուծումը: Մեկ օր անց՝ մայիսի 23-ին, ռուսական վերահսկողական մարմինները պահանջել են դադարեցնել հայկական երեք արտադրողների գինու եւ կոնյակի որոշ տեսակների իրացումը՝ պատճառաբանելով, որ հայտնաբերվել են որակի հետ կապված խնդիրներ: Մայիսի 30-ից ուժի մեջ են մտել նաեւ սահմանափակումներ հայկական գյուղմթերքի մի շարք տեսակների նկատմամբ: Խոսքը վերաբերում է լոլիկի, վարունգի, պղպեղի, կանաչեղենի եւ ելակի ներմուծմանը: Բացի այդ, ռուսական լրատվամիջոցների փոխանցմամբ, հունիսի 2-ից սահմանափակումներ են տարածվելու նաեւ Հայաստանից արտահանվող մի շարք կորիզավոր մրգերի վրա՝ ծիրանի, կեռասի, դեղձի, նեկտարինի, սալորի եւ խաղողի:

Ռուսական կողմը կասեցրել է նաեւ հայկական մի շարք ձկնարտադրողների սերտիֆիկացումը՝ ռուսական շուկայում գործունեության հնարավորություն թողնելով միայն սահմանափակ թվով ընկերությունների: Ավելի վաղ սահմանափակումների էին ենթարկվել նաեւ «Ջերմուկ» հանքային ջրի առանձին խմբաքանակներ:

Տնտեսական սահմանափակումներին զուգահեռ հնչել են նաեւ քաղաքական բնույթի հայտարարություններ: Մոսկվան զգուշացրել է, որ Հայաստանի՝ եվրոպական ինտեգրման գործընթացն ակտիվացնելու եւ Եվրամիությանը մերձենալու դեպքում կարող է վերանայել կամ դադարեցնել արտոնյալ պայմաններով գազի, նավթի եւ չմշակված ադամանդի մատակարարումները:

Ռուս պաշտոնյաները նաեւ հիշեցրել են, որ ներկայում Հայաստանը ռուսական գազը ստանում է այլ երկրների համեմատ շուրջ 2,5 անգամ ավելի ցածր գնով, եւ չեն բացառել, որ ապագայում այն կարող է մատակարարվել արդեն շուկայական արժեքով: Հունիսի 3-ից ՌԴ-ն նաեւ արգելեց Հայաստանից արեւածաղկի, կարտոֆիլի, սմբուկի եւ չրերի ներկրումը Ռուսաստան:

Այսպիսով, վերջին շաբաթների ընթացքում Ռուսաստանի կողմից կիրառված սահմանափակումները ընդգրկել են Հայաստանի արտահանման մի շարք կարեւոր ուղղություններ՝ գյուղատնտեսական արտադրանքից մինչեւ ալկոհոլային խմիչքներ եւ ձկնարդյունաբերություն: Միաժամանակ հնչեցված քաղաքական հայտարարությունները վկայում են, որ տնտեսական գործիքակազմը կարող է օգտագործվել նաեւ որպես ճնշման միջոց՝ հայ-ռուսական հարաբերություններում առկա տարաձայնությունների ֆոնին:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

45 ՆՈՐ ՏՐՈԼԵՅԲՈՒՍ

Երեւանում այլեւս հին տրոլեյբուսներ չկան: Հունիսի 3-ից երթուղի է դուրս եկել նոր 45 տրոլեյբուս, որոնք սպասարկելու են գործող ուղղությունները՝ փոփոխված մի քանի վերջնակետերով: Այս մասին հայտնում է Երեւանի քաղաքապետարանը:

Ուղեգծերի փոփոխությունների մասին՝ ստորեւ.

Տ 1 Աշխատանքի հրապարակ - Ջրվեժի - Զորաղբյուրի - Ողջաբերդի խաչմերուկ Աշխատանքի հրապ-կ /ա.կ./ - Բագրատունյաց - Գ.Նժդեհի - փ.-ներ - Արշակունյաց պ. - Գ.Լուսավորչի փ. - Մաշտոցի պ. - Կորյունի - Աբովյան փ.-ներ - Մյասնիկյան - Գայի պ.-ներ - Թեւոսյան փ. - Զորաղբյուրի ամառանոցներ (Զորաղբյուրի - Ողջաբերդի - Ջրվեժի խաչմերուկ) /վ.կ/: Հետադարձը՝նույն ուղեգծով մինչեւ Մյասնիկյան պ., այնուհետեւ Հերացու - Կորյունի փ.-ներ - Մաշտոցի պ.-Գր.Լուսավորչի փ.-Արշակունյաց պ. - Աշխատանքի հրապարակ:

Տ 2 Աերացիա - Էրեբունի զանգված - Նուբարաշեն Աերացիա /ա.կ./ - Շիրակի 5-րդ նրբանցք - Շիրակի - Արտաշիսյան - Չեխովի - Բագրատունյաց փ.-ներ -Արշակունյաց պ. - Ագաթանգեղոսի փ. - Տ.Մեծի - Արցախի պ.-ներ - Էրեբունի փ.- «Էրեբունի» թանգարան - Այվազովսկու - Տիտոգրադյան - Խաղաղ Դոնի փ.-ներ- Նուբարաշենի խճուղի - Նուբարաշենի 6-րդ,10-րդ, 9-րդ, 11-րդ փ.-ներ /վ.կ./: Հետադարձը՝ նույն ուղեգծով մինչեւ Արշակունյաց պ., այնուհետեւ Գ.Նժդեհի փ. - Գ.Նժդեհի հրապարակ - Բագրատունյաց փ. - շարունակությունը՝նույն ուղեգծով:

Տ 3 15-րդ թաղամաս - «Էրեբունի» օդանավակայան 15-րդ թաղ.՝ Բեկնազարյան - Ֆուչիկի խաչմերուկ /ա.կ./ Բեկնազարյան - Մազմանյան - Շիրազի - Գ.Հասրաթյան - Սեբաստիայի - Բագրատունյաց փ.-ներ - Գ.Նժդեհի հրապարակ - Բագրատունյաց փ. - Արշակունյաց պ. - «Էրեբունի» օդանավակայան /վ.կ./: Հետադարձը՝ նույն ուղեգծով մինչեւ Մազմանյան - Շիրազի խաչմերուկ, այնուհետեւ Գ.Չաուշի - Մելքումովի փողոցներով - Բեկնազարյան - Ֆուչիկի խաչմերուկ:

Տ 4 Ավան - Կոմիտասի պ.- ե/գ կայարան Ավան՝ Ն.Սաֆարյան - Թամրուչի խաչմերուկ /ա.կ ./ - Թամրուչի - Բաբաջանյան - Աճառյան - Ռուբինյանց -Դավիթ Անհաղթի փ.-ներ - Կոմիտասի պ. - Վազգեն Առաջին վեհափառի փ.- Մ.Բաղրամյան - Սայաթ-Նովայի պ.-ներ - Խանջյան փ. - Տիգրան Մեծ պ.- ե/գ կայարան /վ.կ./: Հետադարձը՝ Տիգրան Մեծ պ.- Ագաթանգեղոսի - Գ.Լուսավորիչ փ.-ներ - Մաշտոցի պ. - Մոսկովյան փ. -Մարշալ Բաղրամյան պ. - եւ նույն ուղեգծով մինչեւ Բաբաջանյան - Նվեր Սաֆարյան փ-ներ, մինչեւ Թամրուչի խաչմերուկ

Տ 5 Նոր Նորքի 5-րդ զանգված- մ/կ «Բարեկամություն» - Դավթաշեն թաղամաս Նոր Նորքի 5-րդ զանգված /ա.կ./ - Բ.Մուրադյանի փ. - Գայի պ. - Ռուբինյանց - Դ.Անհաղթի փ.-ներ - Կոմիտասի պ. - Վազգեն Առաջին վեհափառի - Կիեւյան - Հալաբյան փ.-ներ - Եղվարդի խճուղի - Տիգրան Պետրոսյան փ. - Դավթաշենի 4-րդ թաղամաս /վ.կ./: Հետադարձը՝նույն ուղեգծով մինչեւ Գայի պ., այնուհետեւ՝ Թեւոսյան - Գալշոյան - Միկոյան - Բ.Մուրադյան փ.-ներ- Նոր Նորքի 5-րդ զանգված:

● *Անցած 1 օրում գրանցվել է 18 ավտովթար.19 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

«ԲԱՑԱՀԱՅՏ ՎՐԵԺԽՆԴՐՈՒԹՅՈՒՆ Է»

Արցախցի Արթուր Օսիպյանի կալանքն ու քրեական հետապնդումը բացահայտ վրեժխնդրություն է. մարդը կարծիք է հայտնում, որը դուր չի գալիս իշխանությանը, հետեւաբար՝ «բանտը լավագույն տեղն է խելքի գալու համար»: Այս մասին հայտարարել է «Միասնության թեւեր» կուսակցության վարչապետի թեկնածու Արման Թաթոյանը:

«Այս դեպքն ազդակ է ողջ հասարակությանը, թե ինչ է նշանակում, երբ իշխանությունը քաղաքացուն տեսնում է որպես թշնամի եւ վերածվում բռնապետության: Մենք չպետք է թույլ տանք, որ ընտրարշավը լռեցնի այս աղաղակող դեպքը: Մարդը չպետք է մոռացվի պեռաշկիների, ընդդիմադիրներին կզցնելու եւ նման վերնագրային նյութերի հետեւում: Դրա համար ենք մենք ասում՝ արդարությունը գալիս է, որ մարդն ու իր խնդիրները չանտեսվեն, կարծիքը՝ չլռեցվի: Մենք գիտենք՝ ինչպես ապահովել ժողովրդավարություն:

Այսօր (երեկ՝ խմբ.)՝ ժամը 12:00-ին, այցելելու եմ Արթուր Օսիպյանի իրավունքների պաշտպանության պահանջով նստացույց իրականացնող Գեղամ Օհանյանին՝ աջակցություն եւ համերաշխություն հայտնելու»: *(Գ)*

ԵՐԵՔ ԱՌԱՋԱՐԿ

Սփյուռքի հետ հարաբերություններում մենք որդեգրել ենք նոր սկզբունք. «նվիրատվությունից» անցում ենք կատարելու դեպի ներդրում եւ համասեփականություն: Սա նշանակում է, որ Սփյուռքը դառնում է ոչ թե օգնություն տրամադրող, այլ տնտեսության համահեղինակ: Այս մասին ասել է «Միասնության թեւեր» կուսակցության տնտեսական թիմի անդամ Իրինա Անանյանը: «Մեր շփումները ցույց են տալիս, որ Սփյուռքում կա շատ բարձր մոտիվացիա՝ ներդրելու, մասնակցելու եւ դառնալու Հայաստանի զարգացման համահեղինակ: Պարզապես այսօր հաճախ բացակայում են հասկանալի կանոնները, վստահելի մեխանիզմները եւ հարմար գործիքները: Այլ կերպ ասած, պահանջարկ կա, մենք ստեղծում ենք առաջարկը»,- ասել է տնտեսագետը: Մանրամասնելով «Միասնության թեւերի» տնտեսական պլատֆորմի 5-րդ ուղղությունը՝ նա նշել է, որ Սփյուռքին ուղղվելու է երեք տնտեսական առաջարկ. Հայաստանից դուրս բնակվող հայ գործարարը կարող է դառնալ որեւէ նախագծի համասեփականատեր, գործունեություն ծավալել արդյունաբերական գոտիներում կամ գնել հայկական ընկերությունների բաժնետոմսեր եւ պարտատոմսեր: «Մենք կառուցում ենք համահայկական տնտեսական համակարգ, որտեղ Հայաստանը կենտրոնն է, իսկ Սփյուռքը՝ լիարժեք գործընկեր»,- ասել է Իրինա Անանյանը: Հիշեցնենք, որ «Միասնության թեւեր» կուսակցության տնտեսական ծրագիրը հրապարակվել է փետրվարի 17-ին եւ կրում է «7 ուղղություն՝ 1 ճանապարհ» խորագիրը: *(Գ)*

ԱՄԵՐԻԱԲԱՆԿ

ԱՐԺԱՆԱՑԵԼ Է ՉՈՐՍ ՄՐՑԱՆԱԿԻ

Ամերիաբանկը AMX Awards ամենամյա մրցանակաբաշխության շրջանակում արժանացել է 4 մրցանակի՝ երեքը՝ Հայաստանի ֆոնդային բորսայի եւ մեկը՝Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի կողմից:

Մասնավորապես, Ամերիաբանկը լավագույնն է ճանաչվել հետեւյալ անվանակարգերում՝

Բորսայի լավագույն անդամ՝ կորպորատիվ արժեթղթերի շուկայում

Բորսայի լավագույն անդամ ենթակառուցվածքների հետ ինտեգրման ոլորտում

Լավագույն հաշվետու թողարկող՝ կորպորատիվ պարտատոմսերի շուկայում

Դեպոզիտար համակարգի լավագույն հաշվի օպերատոր:

2025թ. Ամերիաբանկը դարձել է Հայաստանի առաջին բանկը, որն իր ներդրումային հաճախորդներին հնարավորություն է ընձեռել MyAmeria հավելվածի MyInvest հարթակի միջոցով ուղիղ հասանելիություն ունենալ Հայաստանի ֆոնդային բորսայի առեւտրային համակարգին: Այս ինտեգրման շնորհիվ MyInvest-ի օգտատերերը հնարավորություն են ստացել բջջային հավելվածից Հայաստանի ֆոնդային բորսայի տարբեր առեւտրային հարթակներում իրականացնել գործարքներ իրական ժամանակում, ինչի շնորհիվ Ամերիաբանկի հաճախորդների կատարած գործարքների քանակը 2026թ. 1-ին եռամսյակում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է շուրջ 150%-ով, իսկ բորսայի ամենաակտիվ հարթակներից մեկում՝ կորպորատիվ պարտատոմսերի հարթակում, Ամերիաբանկի հաճախորդների կատարած գործարքների մասնաբաժինը հասել է շուրջ 80%-ի:

Նշենք, որ 2025 թ. Ամերիաբանկի կողմից թողարկված պարտատոմսերի ընդհանուր ծավալը կազմել է 63.5 մլրդ դրամ, իսկ Բանկի կողմից տեղաբաշխված պարտատոմսերի ընդհանուր ծավալը՝ 98 մլրդ դրամ: Հատկանշական է, որ Ամերիաբանկը հաշվետու ժամանակահատվածում պարտքային կապիտալի շուկայում իրականացրել է 18 նախագիծ, այդ թվում՝ կապիտալի շուկա առաջին անգամ մուտք գործող 3 ընկերության պարտատոմսերի տեղաբաշխում: 2025թ. Ամերիաբանկը նաեւ իրականացրել է ընդհանուր 11 թողարկողի 34 սերիայի արժեթղթերի շուկայի ստեղծում:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ամերիաբանկի կողմից թողարկված եւ շրջանառվող պարտատոմսերի ընդհանուր ծավալը Հայաստանի ֆոնդային բորսայում ցուցակված պարտատոմսերի մեջ կազմել է շուրջ 28%:

Հավելենք, որ AMX-ի ամենամյա մրցանակաբաշխության շրջանակում Հայաստանի ֆոնդային բորսան եւ Կենտրոնական դեպոզիտարիան մրցանակներ են շնորհում կապիտալի շուկայի ակտիվ մասնակիցներին՝ արժեւորելով նրանց նշանակալի ներդրումն ու ձեռքբերումները: Այս տարի մրցանակաբաշխությունն անցկացվել է Հայաստանի ֆոնդային բորսայի հիմնադրման 25-ամյակին նվիրված միջոցառման ժամանակ:

Ամերիաբանկի մասին

Ամերիաբանկը ֆինանսական եւ տեխնոլոգիական առաջատար հաստատություն է, ՀՀ տնտեսական ոլորտի նշանակալի դերակատարներից մեկը: Թվային փոխակերպման ռազմավարության ներքո բանկը ներդնում եւ շարունակաբար կատարելագործում է շուկայում եզակի պրոդուկտներ, ծառայություններ եւ նորարարական հարթակներ, որոնք միտված են բավարարելու մարդկանց ֆինանսական եւ ոչ ֆինանսական կարիքները:

Ամերիաբանկը, որպես դինամիկ զարգացող ֆինթեք միջավայր, առաջարկում է կյանքի որակը բարելավող ամբողջական լուծումներ:

Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից

5 ՄՐՑԱՆԱԿԻ Է ԱՐԺԱՆԱՑԵԼ

Կոնվերս Բանկը լավագույնն է ճանաչվել Հայաստանի ֆոնդային բորսայի (AMX) եւ ՀՀ Կենտրոնական դեպոզիտարիայի մրցանակաբաշխության չորս անվանակարգում, եւս մեկ մրցանակի արժանացել է Բանկի ֆինանսական շուկաների վարչության ղեկավար Հասմիկ Մաթեւոսյանը:

Մրցանակաբաշխությունն անցկացվել է մայիսի 29-ին՝ AMX-ի 25-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակում, որը համախմբել էր պետական կառույցների եւ մասնավոր հատվածի ներկայացուցիչներին՝ քննարկելու Հայաստանում կապիտալի շուկայի ներկա վիճակն ու զարգացման հեռանկարները:

Հաղթանակը միանգամից հինգ անվանակարգում ընդգծում է Կոնվերս Բանկի ակտիվությունն ու արդյունավետ ջանքերը կապիտալի շուկայի տարբեր ուղղություններում.

For Long-Term Cooperation with Funded Pension System. մրցանակ կուտակային կենսաթոշակային համակարգի հետ աշխատանքի համար

Կոնվերս Բանկը կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակիցների սպասարկումն իրականացնում է 2014 թվականից:

Կուտակային կենսաթոշակային համակարգի հետ համագործակցությունն առանձնահատուկ նշանակություն ունի, քանի որ այն վերաբերում է երկարաժամկետ խնայողությունների եւ սոցիալական կայունության ձեւավորմանը: Տարիներ շարունակ Կոնվերս Բանկն աշխատել է ներդրումների վստահելի եւ կանխատեսելի մեխանիզմների զարգացման ուղղությամբ, եւ այս մրցանակը ոլորտում Թիմի աշխատանքների արդյունավետության վկայությունն է:

Best Exchange Member in the FX Market. լավագույնը արտարժույթի շուկայում

Հայաստանի ֆոնդային բորսան բարձր է գնահատել Բանկի ակտիվությունն ու գործարքների ծավալը նաեւ արտարժույթի հարթակում:

Հասմիկ Մաթեւոսյանի խոսքով՝ արտարժույթի շուկան պահանջում է արագություն, ճշգրտություն, ռիսկերի արդյունավետ կառավարում եւ գործընկերների վստահություն: Այս արդյունքներին Բանկը հասել է թիմային հետեւողական աշխատանքի շնորհիվ:

Most Active Exchange Member on the Tabadul Platform. ամենաակտիվը Tabadul հարթակում

Կոնվերս Բանկը Աբու Դաբիի ֆոնդային բորսային անդամակցել է նախորդ տարի՝ իր հաճախորդներին հնարավորություն տալով Tabadul HUB-ի միջոցով ներդրումներ կատարել նաեւ տարածաշրջանային այդ հաբում ներկայացված ընկերություններում:

Tabadul հարթակում Բանկի ակտիվությունը վկայում է միջազգային շուկաներում աշխատելու կարողությունների, պրոֆեսիոնալիզմի մասին եւ կարեւոր քայլ է տարածաշրջանային ֆինանսական շուկային ինտեգրվելու, հաճախորդների ներդրումային հնարավորություններն ընդլայնելու տեսանկյունից:

Best Exchange Member in Government Bonds Market. լավագույնը պետական պարտատոմսերի շուկայում

Կոնվերս Բանկը պետական պարտատոմսերի շուկայի ակտիվ մասնակից է 2008 թվականից:

Պետական պարտատոմսերի շուկան երկրի ֆինանսական կայունության կարեւորագույն հիմնասյուներից է: Այս ոլորտում Բանկի ակտիվ մասնակցությունը նպաստում է շուկայի զարգացմանը, ներդրողների վստահության բարձրացմանը եւ պետական պարտքի արդյունավետ կառավարմանը:

Best Trading Partner. Հասմիկ Մաթեւոսյան

Կոնվերս Բանկի ֆինանսական շուկաների վարչության ղեկավար Հասմիկ Մաթեւոսյանն այս մրցանակին արժանանում է երկրորդ անգամ:

Հասմիկ Մաթեւոսյանն ասում է. «Նման գնահատականները ոչ միայն ձեռքբերում են, այլեւ պատասխանատվություն: Դրանք մեզ պարտավորեցնում են շարունակել աշխատել նույն նվիրումով՝ ապահովելով արդյունավետություն եւ ցուցաբերելով մասնագիտական բարձր կարողություններ, թիմային արդյունավետ աշխատանք»:

Նշենք, որ Կոնվերս Բանկը Հայաստանի ֆոնդային բորսայի եւ Կենտրոնական դեպոզիտարիայի մրցանակաբաշխության տարբեր անվանակարգերում հաղթող է ճանաչվել նաեւ նախորդ տարիներին:

Կոնվերս Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ Գ

ԶԱՐԳԱՑՆՈՒՄ Է ՏԵԼԵՄԱՐՔԵԹԻՆԳԸ

ՎՏԲ-Հայաստան Բանկը զարգացնում է տելեմարքեթինգի ուղղությունը՝ հեռավար սպասարկումը բարձրացնելով նոր մակարդակի: Հաճախորդների հետ աշխատանքի այս ուղին ընդլայնում է սպասարկման հնարավորությունները եւ թույլ տալիս օգտվել բանկային ծառայություններից՝ առանց Բանկ այցելելու:



Նոր մոդելի գլխավոր առավելությունը բանկային ծառայությունների հասանելիության ընդլայնումն է՝ հեռավար ձեւաչափով: Այն միտված է սպասարկման արագացմանը, հարմարավետության բարձրացմանը եւ Բանկի հետ մշտական կապի ապահովմանը՝ անկախ հաճախորդի գտնվելու վայրից եւ դիմելու ժամից: Հաճախորդները կարող են ստանալ խորհրդատվություն, ծանոթանալ վարկային առաջարկներին եւ ձեւակերպել վարկեր հեռավար եղանակով: Հայտերի ուսումնասիրման գործընթացը տեւում է հաշված րոպեներ:

«Տելեմարքեթինգի զարգացումը քայլ է դեպի ավելի ճկուն եւ ժամանակակից սպասարկման մոդել, որը հիմնված է հաճախորդների պահանջների եւ փոխգործակցության թվային ուղիների վրա: Մենք ստեղծել ենք համակարգ, որի շնորհիվ բազմաթիվ հարցեր հնարավոր է լուծել հեռավար եղանակով: Նոր մոդելը նաեւ ուժեղացնում է սպասարկման որակի վերահսկողությունը եւ օգնում առավել արդյունավետ վերլուծել հաճախորդների վարքագիծն ու նախասիրությունները: Արդյունքում ծառայությունները դառնում են ավելի անհատականացված եւ հարմարավետ՝ միաժամանակ նվազեցնելով մասնաճյուղ այցելելու անհրաժեշտությունը: Ամեն օր մենք կատարում ենք մինչեւ 700 զանգ հաճախորդներին, ինչի արդյունքում ունենում ենք ամսական ավելի քան 500 վարկային հայտ», - նշել է ՎՏԲ-Հայաստան Բանկի Գլխավոր տնօրենի - Տնօրինության նախագահի տեղակալ Տարաս Կլադչենկոն:

Տելեմարքեթինգի ուղղության զարգացմանը զուգահեռ՝ Բանկը նաեւ բարելավում է իր գործառնական ենթակառուցվածքը: Տելեմարքեթինգի թիմի համար բացվել է ժամանակակից գրասենյակ՝ ստեղծված աշխատակիցների հարմարավետ եւ արդյունավետ աշխատանքն ապահովելու նպատակով: Տարածքը հագեցած է աշխատանքային օրվա ընթացքում հարմարավետության եւ հանգստի համար անհրաժեշտ բոլոր պայմաններով, ինչը նպաստում է կենտրոնացված լինելու բարձր մակարդակի եւ հաճախորդների հետ հաղորդակցության որակի պահպանմանը: Այս պայմանների շնորհիվ աշխատակիցները կարող են առավել կենտրոնացված զբաղվել դիմումների մշակմամբ, ինչը բարձրացնում է սպասարկման արագությունն ու արդյունավետությունը:

ՎՏԲ-Հայաստան Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից

ՄԱՐԶԱԿԱՆ

ՌՈՆԱԼԴԻՆՅՈ ԵՎ «ԲԱԴԱԼՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ»

«Բադալյան եղբայրներ» ընկերությունների խմբի հրավերով Հայաստան է ժամանել աշխարհահռչակ ֆուտբոլիստ, Ֆիֆայի «Ոսկե գնդակի» տիտղոսակիր Ռոնալդինյոն: Լեգենդար բրազիլացին եւ «Բադալյան եղբայրներ» ընկերությունների խումբը հանդես կգան միջազգային համագործակցությամբ: Ռոնալդինյոն օրերս այցելել է ընկերության գլխամասային գրասենյակ, խմբի գլխավոր գործադիր տնօրեն Վահագն Բադալյանի, համահիմնադիրներ Ռոման եւ Առնո Բադալյանների ուղեկցությամբ ծանոթացել բրենդների գործունեությանը:Վահագն Բադալյանի խոսքով՝համաշխարհային լեգենդի հետ համագործակցությունը միջազգային շուկայում մեծացնելու է հայկական արտադրանքի ճանաչելիությունը. ««Բադալյան եղբայրներ» ընկերությունների խմբի անունից ուրախ եմ ողջունել Ռոնալդինյոյին, ում հետ կնքելու ենք պայմանագիր, որի շրջանակներում համագործակցելու ենք մեր տարբեր բրենդների հետ», - ասել է նա: Ֆուտբոլային աստղը հանդիպել է նաեւ երկրպագուների հետ, ստորագրել մարզաշապիկներ եւ քննարկել ընկերությունների խմբի հետ համատեղ ծրագրերը: «Սա հրաշալի ընկերություն է: Այստեղ ժամանելուցս ի վեր նկատում եմ բոլորի բարությունը, հարգանքն իմ նկատմամբ, իրապես հրաշալի է: Հաշվի առնելով այն փաստը, որ այս ընկերությունը հայտնի է ամբողջ աշխարհում՝ շատ ուրախ եմ, որ գործակցելու առիթ ստեղծվեց»,- ասել է Ռոնալդինյոն: Հավելենք, որ «Բադալյան եղբայրներ» ընկերությունների խումբը ներկայացնում է մի շարք բրենդներ տեղեկատվական տեխնոլոգիաների ամենատարբեր ուղղություններում, որոնք կայուն ներկայություն են ապահովում նաեւ միջազգային հարթակներում: *(Գ)*

ՀԱՅՏՆԻ ԵՆ

Տափօղակով հոկեյի Հայաստանի հավաքականը 2027թ. աշխարհի առաջնությունում հանդես կգա IV A դիվիզիոնում: Այս մասին հայտնում է ՀՀՖ-ի մամուլի ծառայությունը: IIHF-ի խորհուրդը թույլատրել է Հնդկաստանին եւ Մարոկկոյին մասնակցել հոկեյի աշխարհի առաջնությանը: Դրա հետեւանքով IV դիվիզիոնում հայտնվել են ութ հավաքականներ, եւ ֆեդերացիան որոշել է այն բաժանել երկու ենթախմբի՝ A եւ B: Հայաստանի հավաքականը A դիվիզիոնում կմրցի Քուվեյթի, Ինդոնեզիայի եւ Սինգապուրի հավաքականների դեմ: Ամենաուժեղ թիմը կբարձրանա 2028թ. IIIB դիվիզիոն: Մրցաշարի անցկացման հայտ են ներկայացրել Քուվեյթն ու Ինդոնեզիան: Թե որտեղ կանցկացվի մրցաշարը, հայտնի կդառնա ավելի ուշ: IV B դիվիզիոնում հանդես կգան Իրանը, Մալայզիան, Հնդկաստանը եւ Մարոկկոն:

ԲԱՆԿԵՐ Գ

ԲԺՇԿԱԿԱՆ–ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Ֆասթ Բանկի հովանավորությամբ Իմունոլոգիայի եւ ալերգոլոգիայի հայկական ասոցիացիան, Հայկական բժշկական ասոցիացիայի եւ Քիթ կոկորդ ականջի ու գլխի եւ պարանոցի վիրաբուժության ասոցիացիայի հետ համատեղ օրերս իրականացրել են գիտական հանդիպում:

Ոլորտի առաջատար մասնագետները քննարկել են աշխարհում լայն տարածում գտած առողջապահական խնդիրները՝ անդրադառնալով ալերգիկ հիվանդություններին, իմունային համակարգի խանգարումներին եւ դրանց դրսեւորումներին շնչառական համակարգի վրա: Հանդիպմանը փորձագետները ներկայացրել են ալերգիաների առաջացման նորագույն հիպոթեզներն ու ժամանակակից գիտական մոտեցումները՝ շեշտադրելով դրանց ազդեցությունը բուժառուների կյանքի որակի վրա:

Ֆասթ Բանկի կողմից նման նախաձեռնությունների հովանավորումն ստեղծում է ամուր հարթակ մասնագիտական փորձի փոխանակման եւ նորարարական մեթոդների ներդրման համար: Բանկը գործուն աջակցություն է տրամադրում Հայաստանում բժշկության եւ գիտական առաջընթացի կայուն զարգացման համար:

Ֆասթ Բանկը թվային բանկ դառնալուն միտված ընկերություն է, որը ներկայացված է Երեւանում եւ Հայաստանի բոլոր մարզերում:

Ֆասթ Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից (Գ)

ՅՈՒՆԻԲԱՆԿԸ ԳՈՐԾԱՐԿԵԼ Է

Յունիբանկի UNIMobile հավելվածում հասանելի են դարձել հեռախոսահամարով դրամական փոխանցումները: Այժմ Յունիբանկի հաճախորդները կարող են ակնթարթորեն գումար փոխանցել ArcaPay համակարգին միացած այլ բանկերի հաճախորդներին՝ նշելով ստացողի հեռախոսահամարը:

ArcaPay-ով փոխանցում կատարելու համար պետք չէ մուտքագրել ստացողի քարտի համարը կամ բանկային այլ տվյալներ, ինչը գործընթացը դարձնում է առավել պարզ եւ արագ:

Փոխանցում կատարելու համար UNIMobile հավելվածի «Փոխանցում հեռախոսահամարով» բաժնում անհրաժեշտ է ընտրել ArcaPay փոխանցումը, նշել ստացողի հեռախոսահամարը եւ

բանկը, մուտքագրել գումարի չափը եւ հաստատել գործարքը: Գումարը փոխանցվում է ստացողի հաշվին վայրկյանների ընթացքում եւ անմիջապես հասանելի դառնում օգտագործման համար:

Մինչեւ 2026 թվականի դեկտեմբերի 31-ը ArcaPay փոխանցումներն իրականացվելու են առանց միջնորդավճարի: Մեկ գործարքի առավելագույն գումարը կազմում է 400 000 ՀՀ դրամ:

Նոր ծառայության գործարկումը UNIMobile-ում Յունիբանկի հերթական քայլն է թվային ծառայությունների զարգացման եւ հաճախորդներին ֆինանսների կառավարման ժամանակակից ու հարմար լուծումներ առաջարկելու ուղղությամբ: *(Գ)*

«Նաիրի» հրատարակչության ՓԲԸ-ի հարգելի՛ բաժնետերեր, 2026թ.-ի հունիսի 8-ին՝ ժամը 15:00-ին, ք. Երեւան Տերյան 97-ում տեղի կունենա «Նաիրի» հրատարակչության ՓԲԸ-ի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը:

● *Հովի. Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոնում հունիսի 13-ն՝ ժամը 17:00-ին, կկայանա «Մադագասկար» ներկայացումը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ի՞նչ կարգով է իրականացվում ամուսնալուծությունը եւ դրա պետական գրանցումը, ի՞նչ փաստաթղթեր են ներկայացվում ամուսնալուծության պետական գրանցման համար, ի՞նչ ժամկետում է կատարվում ամուսնալուծության պետական գրանցումը, որքա՞ն է կազմում պետական տուրքի դրույքաչափը:

Հերմինե Սարգսյան, 38 տարեկան



ՊԱՏԱՍԽԱՆ. Եթե ամուսինների միջեւ առկա է ամուսնալուծվելու վերաբերյալ փոխադարձ համաձայնություն, ապա նրանց ամուսնալուծությունը կատարվում է ՔԿԱԳ մարմնում:

Ամուսնալուծության գրանցման համար ամուսինները ՔԿԱԳ մարմին են ներկայացնում համատեղ դիմում: Եթե ամուսիններից մեկը հնարավորություն չունի անձամբ ներկայանալու ՔԿԱԳ մարմին՝ ամուսնալուծության մասին համատեղ դիմում տալու համար, ապա ամուսինների կամքի արտահայտությունը կարող է ձեւակերպվել ամուսնալուծության մասին առանձին հայտարարություններով: Ամուսնալուծության պետական գրանցման համար ներկայացվում է՝ անձը հաստատող փաստաթուղթ, ամուսնության վկայական (առկայության դեպքում), ամուսինների համատեղ դիմումը՝ ՔԿԱԳ մարմնում ամուսինների միջեւ փոխադարձ համաձայնության առկայությամբ ամուսնալուծություն կատարելու համար, ամուսիններից մեկի դիմումը, եթե մյուսը դատարանի կողմից ճանաչվել է անհայտ բացակայող կամ անգործունակ կամ դատապարտվել է ազատազրկման երեք տարուց ոչ պակաս ժամկետով, ամուսինների դիմումը եւ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռը՝ դատական կարգով ամուսնալուծություն կատարելու դեպքում: Ամուսնալուծության գրանցումը եւ ամուսիններից յուրաքանչյուրին ամուսնալուծության վկայականներ տրամադրելը կատարվում է ՔԿԱԳ մարմնի կողմից ամուսնալուծության մասին ամուսինների դիմում տալու օրվանից առնվազն մեկ ամիս հետո, բայց երեք ամսից ոչ ուշ:

ՀՀ արդարադատության նախարարություն

Էջը՝ ՄԱՐԻԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Հետաքրքիր է իմանալ՝ ով է մարդու իրավունքների պաշտպանը:

Կարինե Աբրահամյան, 51 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Մարդու իրավունքների պաշտպանն անկախ պաշտոնատար անձ է, ով հետեւում է պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց, իսկ Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքով սահմանված դեպքերում՝ նաեւ կազմակերպությունների կողմից մարդու իրավունքների եւ ազատությունների պահպանմանը, նպաստում է խախտված իրավունքների եւ ազատությունների վերականգնմանը, իրավունքներին ու ազատություններին առնչվող նորմատիվ իրավական ակտերի կատարելագործմանը:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպան

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ Գագիկ Շամշյանի

Երեւանում բախվել են «BMW»-ն ու «Volkswagen»-ը. կան վիրավորներ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 1 + 6 + 17 + 21
Կոտայքի լեռներ	+ 2 + 6 + 17 + 20
Կոտայքի նախալեռներ	+ 9 + 12 + 21 + 24
Գեղարքունիք	+ 3 + 6 + 16 + 20
Լոռի	+ 3 + 7 + 19 + 23
Տավուշ	+ 4 + 7 + 20 + 23
Արագածոտնի լեռներ	+ 2 + 5 + 16 + 19
Արագածոտնի նախալեռներ	+ 8 + 12 + 22 + 26

Արարատ	+ 10 + 13 + 25 + 28
Արմավիր	+ 10 + 13 + 27 + 30
Վայոց ձորի լեռներ	+ 4 + 7 + 17 + 20
Վայոց ձորի նախալեռներ	+ 10 + 14 + 26 + 29
Սյունիքի լեռներ	+ 3 + 6 + 14 + 17
Սյունիքի նախալեռներ	+ 6 + 10 + 18 + 22
Սյունիքի հովիտներ	+ 11 + 15 + 28 + 31
Երեւան	+ 12 + 14 + 27 + 29

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **03.06.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*